ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 43-Ա

«16» մարտի 2020 թվական գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՆԴԻՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 8-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ «ԲԱՆԴԻՎԱՆ ԿԱԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18–ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ, 11-րդ, կետերով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188–րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասով, ինչպես նաև հաշվի առնելով կառույցն իրականացրած անձի դիմումը, հաշվի առնելով , որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բանդիվան բնակավայրի 8-րդ փողոց, թիվ 1/1 հասցեում գտնվող «Բանդիվան Կաթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը սեփականության իրավունքով (սեփականության իրավունքի գրանցման թիվ 28092018-08-0033 վկայական) պատկանող հողամասում ինքնակամ կառուցված 333,59 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով կառույցը ճանաչել օրինական:
2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի բյուջե պետք է վճարի

Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 220170 (երկու հարյուր քսան հազար հարյուր յոթանասուն) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճար:

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:
3) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ենթակա է պետական գրանցման:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔ ՂԵԿԱՎԱՐ՝

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«16» մարտի 2020 թվական
գյուղ Ամասիա